III տարի „ՄՈՒՐՃ" III տարի

ՔԱՂԱՔԱԿԱՆ-ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ԳՐԱԿԱՆ

ԱՄՍԱԳՐԻ

1891

ԹԻԱԿԱՆԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԲԱՑԻԱԾ Է

«ՄՈՒՐՃ» ամսագիրը կը հրատարակուի 1891 թուականին նոյն ծրագրով որպէս և նախկին տարիներում։

«ՄՈՒՐՃ»-ը կը հրատարակուի ամեն ամիս 8 – 11 թերթ մեծութեամբ։

«ՄՈՒՐՃ»-ի ՆՈՐ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԸ ձրի կը ստանան ՏԻԿԻՆ Մ. ՄԱՐԻՍԵԱՆԻ «ՀԵՂԻՆԷ» վէպի 1890 թուականի «Մուրճ»-ում տպուած բոլոր գլուխները, այն է՝ վէպի առաջին հատորը, բաղկացած մօտ 200 մեծադիր երեսներից։ «Հեղինէ» վէպի շարունակութիւնը կ'սկսուի 1891 թ. յունուարի դրքում։

«ՄՈՒՐՃ»-ի նոր բաժանորդները, բացի դորանից, արտօնութիւն կ'ունենան ստանալու «Մուրճ» ամսագրի 1889 և 1890 թուականների բոլոր 24 համարները 14 բուբլիով, մինչդեռ ոչ-բաժանորդներին կը ծախուի նոյնը 24 բուբլիով։

«ՄՈՒՐՃ»-ի գրականական մասը ապահովուած է մասնակցութեամբ բազմաթիւ աշխատակիցների, որոնց թիւը մինչ այժմ անդադար աճած է։

«ՄՈՒՐՃ»-ի մէջ 1890 թուականին լոյս տեսած գրուածքները, ըստ բաժինների, տրուում է ստորև իսկ ներկայ № -ի վերջում հրատարակուում է նաև ամբողջ տարուայ բովանդակութիւնը՝ ամիսների կարգով։

«ՄՈՒՐՃ»-ի վիպական բաժինը։ «Մուրճ»-ը 1889 թուականին

տալիս էր կանոնաւորապէս ամեն Ջ-ում մի վէպ, ներկայ 1890 թուականին «Մուրճ»-ը տուեց ամեն ամիս երկուերկու ինքնուրոյն վէպեր, 1891 թուականին «Մուրճ»-ը, ամեն ամիս, երկու ինքնուրոյն վէպերից դուրս՝ տալու է կանոնաւորապէս նաև մի թարգմանական վէպ կամ պատմուածք։ Այնպէս որ սովորապէս ամեն համարում «Մուրճ»-ը տալու է երկու ինքնուրոյն հայկական վէպեր և մի թարգմանական վէպ կամ պատմուածք։

«ՄՈՒՐՃ»-ի ցայժմեայ բաժանորդները խնդրում են որ, վերանորոգելով իրանց բաժանորդագրութիւնը, նոր բաժանորդ գրուել ցանկացողներին աշխատեն ծանօթացնել «Մուրճ»-ի բովանդակութեան հետ, որ հրատարակւում է ներկայ Ջ-ում։ Նոքա խնդրում են նաև բաժանորդագրական ծրարները իրանց ծանօթ շրջաններում ցրուել։

«ՄՈՒՐՃ»-ի բաժանորդագինն է տարեկան 10 բուբլի, որ կարելի է վճարել նաև մաս-մաս, ստորագրելիս առնւազն 5 բուբլի և մինչ յունիսի 1-ը ամբողջը վճարելու պայմանով։

Ուսուցիչները և ուսանողները վճարում են 8 բուբլի, ստորագրելիս առնւազը 3 բուբլի և մինչ յունիսի 1-ը ամբողջը վճարելու պայմանով։

ԹԻՖԼԻՍՈՒՄ գրւում են բաժանորդ «Մուրճ»-ին՝

1) «Մուրճ»-ի խմբագրատունը։

2) Կենտրոնական գրավաճառանոցում, Գոլովինսկի պրոսպեկտ, տուն Միրիմանովի։

3) Խիղեկլի պաւիլիօնում, Ալեքսանդրեան այգու և Բարիատինսկի փողոցի վերին անկիւն։

4) Մակար Զմշկեանի գրավաճառանոցում՝ Վելիամինեան փողոց, քաղաքային տանը և Վորոնցովի արձանի մօտ։

5) Եւանգուլովի «Городская справочная контора»-ում, Գոլովինսկի պրոսպեկտ։

6) Սափարեանի Ծխախոտի խանութում, պ. Յովհ. Ստեփանեանցի մօտ, Սիօնի փողոց, Անանովի քարւանսարայում։

Ներկայ 1890 թ.-ին „ՄՈՒՐՃ“ ամսագիրը տուեց հետևեալ յօդուածները և գրուածքները։

1) *Հասարակական և ընդհանուր խնդիրներ։*—Գործերի դրութիւնը (№ 1, յօդուած Ա. Արասխանեանցի), Թիւ և ոյժ (№ 5, նոյնը), Պանդխտութեան խնդիրը (յօդուած երկրորդ, № 6, նոյն հեղինակ), Հողային խնդիրը Անդրկովկասում (յօդուած 2-րդ և երրորդ, № 7 և 9, նոյն հեղ.), Ժողովուրդը որպէս քաղաքակրթական ոյժ (№ 11, նոյն հեղ.), Աղքատների խնամատարութիւնը (երկու յօդուած, Գր. Վարդանեանցի, № 4 և 10), Էժանագին գրադարանի առաջին փորձը մեզանում (Լ. Սարգսեանցի, № 12)։

2) *Հետազօտական։*—Համայնական հողատիրութիւնը Երևանի նահանգում (Ե. Սաղաթելեանցի, №№ 5, 7 և 10)։—Կարսի բանուորների դրութիւնը (Ներ. Ղազարեանցի, № 1)։—Պանդխտութիւնը մեզանում (Անուշ. Քալանթարի, № 11 և 12)։

3) *Վէպեր և կեանքի պատկերներ։*—Բղդէ (մեծ վէպ Պ. Պուշկինի, №№ 1—6 և № 8)։—Հայ գիւղացու Սև օրը (վէպ Ս. Մելիք-Շահնազարեանցի, №№ 3—5)։—Հեղինէ (մեծ վէպ Տիկին Մ. Մարիսեանի, առաջին մասն, №№ 6, 7, 9, 10 և 11)։—Խաթ-Սաբա (Հայ բոշաների կեանքից, Վ. Փափազեանի, № 9 և 10։)—Ապագայ Աղան (№ 1), Օրիորդ Նուարդ (№ 2), Արանեանի մօտ (№ 3), Զրադաց (№ 4), Հարևաններ (№ 11)—Ալ. Նամալեանի։—Նկարիչներ (Վ. Դարշինի № 8)։—Ուիլեամս ամուսինների վրդովմունքը (Մարկ Տուէնի, № 11), Ուիլեամս ամուսինները և կայծակը (Մ. Տուէնի, № 12)։

4) *Նկարագրական։*—Վանայ լիճը (Տ. Փիրումեանցի, № 3)։

5) *Հայկական կեանքից։*—Հայ ընտանիքը (Լէօի, №№ 1, 2, 3, 7)։

6) *Բանաստեղծութիւն։*—Լ. Մանուէլեանցի (№№ 1, 2, 7, 10)։—Արշալոյս Մխիթարեանի (№ 2, 4, 5, 6, 7, 8, 11, 12), Արծիւեանի (№№ 1, 2, 3, 5, 9, 10), Զ. Բալուզեանի (№ 1, 11), Կրասիլնիկեանի (№ 6), Հայնէ, Լոնգֆելօ, Պոռ, Էլիոտ, Մուր, Լէօպարդի, Պուշկին՝ Անդրէև՝ թարգմանութեամբ Արծիւեանի, Բալուզեանի և Կրասիլնիկեանի (№№ 4, 6, 8, 9)։

7) *Ճանապարհորդական։*—Այց Թիւրքաց Հայաստանին (Լ.

Սարգսեանցի, № 1 և 2)։—Ճանապարհորդի յիշատակարանից՝ Ալիշանի մոտ (Մ. Սիրունի, № 8)։—Զմիւռնիայից-Ալեքսանդրապոլ (Յ. Տէր-Միրաքեանի, № 12)։

8) Քաղաքական։—Եւրոպան 1890 թ.-ի շէմքում (№ 1), Վիլհէլմ II-ի հրովարտակները բանւոր դասակարգի մասին (№ 2), Բիսմարկի հրաժարականը (№ 3), Համա-ամերիկական միութեան գործը (№ 4), Գերմանիայի զինւորական օրինագիծը, Ֆրանսիայի ներքին գործերը (№ 5), Եւրոպան և Աֆրիկայի բաժանումը (№ 7), Աֆրիկայի բաժանումը և ընդհանուր քաղաքականութիւնը (№ 9), Առևտրական դաշինքների խնդիրը Եւրոպայում (№ 11) Պարլամենտ. ընտրութիւնները Իտալիայում և Հիւս. Ամերիկայում, կարդինալ Լաւիժերի, Պարնել և Գլադստոն (№ 12)։

9) Տնտեսական։—Բամբակի մշակութիւնը Անդրկովկասում (Վ. Տարատինով, № 6), Անտառները Անդրկովկասում (Ա. Արասխ. № 11)։

10) Ժողովրդագրական։—Բոշաները ըստ Ա. Կոլոչիի (Ա. Արասխանեանցի № 10)։ Սև Լեռնցիք (Յ. Ղարագեօզեանի, № 12)։

11) Գիտական։—Հոսանքներ բնագիտական ֆիլոսոֆայութեան մէջ (Ա. Բարելեանի, № 10), Արեգակի ազդեցութիւնը բուսականութեան վերայ Անդրկովկասում (Ալեք. Քալանթարի, № 11), Կոխի գիւտը տուբերկուլոզի դէմ (դ-ր Գր. Տէր-Գրիգորեանցի Ղզլարցու), (Կոխի հրատարակութիւնը Ա. Բարելեանի № 12)։

12) Թատրոն և Գեղարուեստ։—Թիֆլիսի Պատկերահանդէսը (սալոն), Ա. Արասխ., № 2), Նկարչի Նամակները (Գ. Բաշինջաղեանի, № 11), «Ամուսիններ» (Լուսինի, № 4) «Վարժուհի» (Լուսինի, № 4)։

13) Կենսագրական։—Վիլիամ Գլադստոն (№ 1), Լուռենց Ֆոն Շտայն, (№ 6, Ա. Արասխ.), Ռոբերտ Կոխ (№ 12, Ա. Բարելեանի)։

14) Դպրոցական։—Գերմանական դպրոցների դրութիւնը (Արշ. Տէր-Միքելեանի, №№ 5, 6, 8), Գերմանական համալսարանների ոգին (Յ. Բարխուդարեանցի, № 5), Կարինի դպրոցական խնդիրները (Վ. Ասքանազեանի (№№ 3, 5)։

15) Լեզուագիտական։—Սուրբ Լեզու (Ղ. Աղայեանցի, № 11 և 12)։

16) Բանադատական։—Ամուսիններ, կոմ. Գ. Սունդուկեանցի (Լուսինի, № 2), Վարժուհի, կոմ. Զմշկեանի (Լուսինի, № 5)։—Մանկական ընթերցանութիւն և Ղ. Աղայեանց (Եր. Ղազարեանի,

№ 3), Դաստիարակչական մոլորութիւններ (Ն. Ղազարեանի, № 9)։ Ազգային վէպ (Մ. Արեղեանի, № 1 և 2)։

17) Ընդ դիմախօսական։—Քննադատներին (№ 4, Եղ. Մադաթ.), «Արձագանք»-ը և ուսանողութիւնը (Տ. Յովհաննիս., № 5), Գրական. աչքակապութիւն (Ե. Մադաթ., № 6), «Արձագանք»-ի ճշմարտախօսութիւնը (Ե. Մադաթ., № 8), Բանաստեղծութիւնը և «Մուրճ»-ը (Ընթերցող, № 12)։

18) Արտասահմանեան թղթակցութիւններ։—Գլադստոնի յոբելեանը (№ 1), Անգլիայի ժողովրդական դպրոցները (№ 3), Մանկավարժական – բուժական վարժարան (№ 5), Բանւորները Անգլիայում (№ 5), Ստենլէյ և Լմին փաշան (№ 8), Ֆրանսիայի պետական ծախքերը 1870 թուականից դէս (№ 11)։ Կոխի գիւտի մասին վկայութիւններ (№ 12)։

19) Ներքին Տեսութիւն։—Ամսայ քրոնիկ (Լուսինի) —Ամուսիններին» ներկայացումը (№ 2), Արծրունու գործունէութիւնը տօնելու խնդիրը, Պատկերազարդ թերթեր, Ներսիսեան դպրոցի տարեկան ակտը, Հայոց ընկերութիւնների ընդհանուր ժողովները (№ 3), «Վարժուհու» ներկայացումը (№ 4), Արծրունու 25-ամեայ գործունեայութիւնը, ժողովրդական ընթերցանութեան գործը (№ 5), Ռոսսին Թիֆլիսում (№ 6), Ուսուցչական ռոճիկներ (№ 7), Հայոց ներքին կեանքի զարգացման պայմանները, Խորէն Նար-Բէյ արքեպ. մեզ մօտ, Պատրիարքական ընտրութիւններ Կ. Պոլսում, Թեմական տեսչութիւնների վերականգնումը (№ 10). Խրիմեան և Նար-Բէյ որպէս պատրիարքացուներ, Թիֆլիսի առաջին կարգի տնատէրերը, Ռաուլ Կոչալսկի և Նորա կոնցերտները (№ 11). Թիֆլիսի քաղաքային ինքնավարութեան ընտրութիւնները։ Հայոց թատերասէրների ներկայացումները (№ 12)։

Բաքուի մարդաս. Ընկ. Ընդհ. ժողովը (Զլիցեանի, № 2), Ներսիսեան դպրոցի տնտես. դրութիւնը (№ 3), Կոնդակ կոպարների մասին (№ 6)։

20) Գրախօսութիւն։—Տարեայ ընթացքում գրախօսուած են նոր լոյս տեսած 40-ից աւելի հրատարակութիւններ, գլխաւոր աշխատակցութեամբ Ա. Արասխանեանցի, Ալ. Քալանթարի, Լևոն Սարգսեանցի, որպէս նաև մասնակցութեամբ այլ դրական ոյժերի։